



International Parkinson and Movement Disorder Society

# Դեպրեսիան, տագնապը եւ սպառնալից Պարկինսոնի հիվանդության ժամանակ. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

## ԿԱՐՈՂ Է ԱՐԴՅՈՔ ՊԱՐԿԻՆՍՈՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԴԵԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այո, Պարկինսոնի հիվանդությունը (ՊՀ) կարող է առաջացնել մի շարք ոչ շարժողական (այն է՝ չարժման հետ չկապված) խնդիրներ՝ ի հավելումն առկա շարժողական խնդիրների: Տրամադրության խնդիրները կարևոր և հաճախ հանդիպող ախտանիշներ են: Որոշ հիվանդների դեպքում, դրանք կարող են ազդել կյանքի որակի վրա ավելի շատ, քան շարժողական դժվարությունները:

## ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ՀԱՃԱԽ ՀԱՆԴԻՊՈՂ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ ՊՀ ԺԱՄԱՆԱԿ

Տրամադրության հետ կապված ամենահաճախ հանդիպող ախտանիշները, որոնք ախտահարում են ՊՀ հիվանդներին, դեպրեսիան են, տագնապը և սպառնալից:

- Դեպրեսիան ցածր տրամադրության, տխրության, անհուսության զգացողության է, երբեմն ներքին դատարկության և մեղքի զգացման հետ մեկտեղ:
- Տագնապը նյարդայնության, անհանգստության, լարվածության զգացում է: Տագնապային հիվանդները կարող են ունենալ վախի կամ խուճափի գրոհներ:
- Ապառնալից ինչ-որ բանով զբաղվելու կամ այլ մարդկանց հետ շփվելու հետաքրքրության, էնտուզիազմի կամ մոտիվացիայի պակաս է:

## Ե՛ՐԲ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

Տրամադրության ախտանիշները կարող են սկսվել ցանկացած ժամանակ: Որոշ պացիենտներ կարող են ունենալ նման ախտանիշներ նույնիսկ մինչև շարժողական խնդիրների սկիզբը: Ուրիշների մոտ դրանք կարող են ի հայտ գալ ՊՀ տարիներ տատապելուց հետո: Որոշ պացիենտներ նկատում են տրամադրության փոփոխություններ դոֆամիներգիկ դեղերի օգտագործման հետ կապված: Օրինակ տագնապը հաճախ առաջանում է, երբ դեղի մակարդակը արյան մեջ ցածր է լինում, այսպես ասած « անջատման » շրջանում:

## ԻՆՉՊԵ՛Ս ԵՄ ԿԱՐՈՂ ԵՄ ՃԱՆԱԶԵԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ

Դեպրեսիան և տագնապը հաճախ ուղեկցվում են էներգիայի պակասով և հոգնածությամբ, ախորժակի նվազումով և քնի խանգարումներով: Սակայն այս խնդիրները կարող են առաջանալ նաև ինքնուրույն, ուստի նրանց առկայությունը ոչ միշտ է վկայում նրա մասին, որ Դուք դեպրեսիա ունեք: Որոշ այլ ախտանիշներ երբեմն ավելի նկատելի են ընտանիքի և ընկերների համար, քան Ձեր համար: Դրանցից են.

- վախի զգացողության շատացում,
- գերզոգնվածություն,
- սոցիալական մեկուսացում,
- ընտանեկան առիթներին կամ միջոցառումներին քիչ մասնակցություն:

## ԻՆՉՊԵ՛Ս ԵՆ ԱԽՏՈՐՈՇՎՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ


Անմիջապես պատմեք Ձեր բժշկին տրամադրության, քնի կամ ախորժակի փոփոխությունների մասին, որպեսզի կարողանաք ստանալ ախտորոշում և բուժում: Ձեր բժիշկը կցանկանա իմանալ.

- երբ են սկսվել ախտանիշները,
- ինչքանով են դրանք Ձեզ խանգարում,
- կապված որևէ այլ ախտանիշների մասին,
- դեղորայքի ընդունման ժամերի հետ կապի մասին:

Եթե ունեք ամուսին կամ խնամող, ապա նրանք ևս կարող են օգնել՝ հայտնելով Ձեր տրամադրության, վարքագծի և/կամ քնի այլ խանգարումների մասին:

## ԻՆՉՈՒ՛ ԵՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ

ՊՀ կարող է առաջացնել որոշակի փոփոխություններ գլխուղեղի այն հատվածներում, որոնք կարգավորում են տրամադրությունը: Հիվանդության հետևանքով նյարդային բջիջների որոշ փոխադրանյութերի քանակը կարող է պակասել, ինչպես օրինակ դոֆամինի, սերոտոնինի, նորադրենալինի, ինչն էլ կարող է ընկած լինել տրամադրության որոշ ախտանիշների հիմքում: Ձեր վերաբերմունքը Ձեր հիվանդության հանդեպ և որոշ հոգեւոքաբանական գործոններ նույնպես կարող են այս ախտանիշների բերել:



# Դեպրեսիան, տագնապը եվ ապաթիան Պարկինսոնի հիվանդության ժամանակ. Անհրաժեշտ փաստեր հիվանդների համար

## ԻՆՉՊԵՄ ԵՆ ԲՈՒԺՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ԱԽՏԱՆԻՉՆԵՐԸ ՊՀ ԺԱՄԱՆԱԿ

Տրամադրության ախտանիշների բուժման տարբեր եղանակներ կան.

- հակադեպրեսանտ և տագնապամարիչ դեղամիջոցները կարող են բուժել դեպրեսիան և տագնապը,
- դոֆամինային դեղերը, որոնք բարելավում են շարժողական ախտանիշները, կարող են բուժել նաև դեպրեսիան ու տագնապը, հատկապես եթե վերջինները տատանվում են՝ կախված դեղորայքի ընդունման ժամից,
- հոգեթերապիան նույնպես կարող է օգնել դեպրեսիայի և տագնապի հարցում,
- ծրագրված ակտիվությունը, վարժությունները և սոցիալիզացիան կարող են օգնել ապաթիայի բուժման հարցում,
- ավելի շատ քնելը , սոցիալական աջակցությունը և պթեսից խուսափելը նույնպես կարող են օգտավետ լինել:

## ՀԱՄԱՌՈՏ

- Դեպրեսիան, տագնապը և ապաթիան կարող են լինել ՊՀ ախտանիշներ և բավական հաճախ են հանդիպում:
- Նրանք կարող են վաղ առաջանալ, երբեմն շարժողական ախտանիշներից առաջ, կամ էլ ի հայտ գալ հիվանդության ուշ շրջանում:
- Կարևոր է պատմել Ձեր բժշկին այս ախտանիշների մասին, քանի որ կան հատուկ բուժման եղանակներ:
- Դեղամիջոցները, հոգեթերապիան և սոցիալական աջակցությունը այս ախտանիշները բուժելու հիմնական միջոցներն են: